ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ
Պատմական գիտ. դոկտոր

ԱՎԱՐԱՅՐ

Վեհափառ Հայրապետ,

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների տեսուչ Գերաշնորհ Գեւորգ եպիսկոպոս,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Հոգեշնորհ Սուրբ Հայրեր,

Արժանապատիվ Տեր Հայրեր,

Բարեշնորհ սարկավագներ,

Մեծարգո հյուրեր,

Հարգելի գործընկերներ.

Այսօր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնում է Վարդանանց տոնը: Այս տոնն առանձնահատուկ է յուրաքանչյուր հայի համար: Վարդանանց տոնը, իրավամբ, համազգային է՝ միավորելով կանանց ու տղամարդկանց, հարուստներին եւ աղքատներին, զինվորներին ու շինականներին. պատահական չէ, քանզի 15 դար առաջ՝ հանուն Հայրենիքի ոտքի ելան հասարակության բոլոր խավերը: Սակայն ակամայից հարց է ծագում. արդ, ո՞րն է Ավարայրի հանելուկը, ինչո՞ւ հանուն հավատի մղված բազում ճակատամարտերի եւ պատերազմների, հաղթանակների ու պարտությունների շարքում առանձնացնում ենք Վարդանանց սխրանքը:

Անցած մեկ եւ կես հազարամյակի ընթացքում արտահայտվել են բազմաթիվ, հաճախ իրարամերժ տեսակետեր: Թերեւս չկա պատմական որեւէ լուրջ երկասիրություն, որի հեղինակը խուսափեր այս հարցի լուսաբանումից: Ընդորում, խնդիրը դիտարկվել է տարբեր հարթություններում՝ կրոնագաղափարական, քաղաքական, ռազմական: Բնական է, որ նմանատիպ մոտեցումների պարագայում հաճախ էին հակասությունները. այն ինչ ճիշտ էր թվում կրոնագաղափարական տեսանկյունից, ժամանակավրեպ կամ նույնիսկ սխալ էր թվում քաղաքական, եւ աննպատակահարմար՝ ռազմական տեսանկյունից:

Այս ամենին գումարվում էր յուրաքանչյուր պատմաբանի՝ գնահատական տալու հավերժ գայթակղությունը:

Արդյունքում՝ 451 թ. ապստամբությունը, որն ուներ քաղաքական, տնտեսական խոր արմատներ, շարքային ընթերցողին ներկայացվում էր, այսպես կոչված, «Վարդան-Վասակյան հակամարտության» շարակարգում: Իրավունք ունի՞ արդյոք պատմաբանը դատավոր լինելու:

Հանճարեղ Ադոնցը պաշտպանում էր պատմաբանի այս իրավունքը, իսկ նրա ժամանակակից ռուս մեծանուն պատմաբան Վասիլի Կլյուչեւսկին գտնում էր, որ պատմաբանը քննիչ է, այլ ոչ թե դատավոր: Ամենայն հավանականությամբ, իրականությունն այս երկու տեսակետերի համադրությունն է. մի կողմից՝ չկա ավելի անհեռանկարային զբաղմունք, քան պատմական իրողությունների կանխորոշված, նախօրոք պիտակավորված վերլուծությունը, մյուս կողմից՝ պատմական ցանկացած իրադարձություն կարող է եւ պետք է ընկալվի միայն հետագա քաղաքական, գաղափարական, տնտեսական զարգացումների շարակարգում: Թերեւս հենց այս տեսանկյունից պետք է գնահատվի Հայոց պատերազմը, թեպետ Ե. դարակեսերի քաղաքական բարդ ու խճճված իրադարձությունները ի սկզբանե խոցելի են դարձնում պատմական յուրաքանչյուր հետազոտություն:

Սույն զեկուցումով, բնական է, չենք կարող Հայոց պատերազմը լիարժեքորեն ներկայացնել: Փորձենք միայն զատել որոշ հարցադրումներ, որոնք կարող են օժանդակել Ե. դարի այդ խոշորագույն իրադարձության ամբողջական ընկալմանը:

Այս առումով կարեւորագույն հարցադրումներն են.

ա. Որքանո՞վ էր անխուսափելի ապստամբությունը.

բ. Երկիրը պատրա՞ստ էր պատերազմին.

գ. Որքանո՞վ էր ճիշտ կազմակերպվել երկրի պաշտպանությունն ու կառավարումը ճգնաժամային իրավիճակում.

դ. Ո՞րն էր ապստամբության վերջնարդյունքը հետագա տասնամյակների պատմական զարգացումների լույսի ներքո:

Առաջին հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ պարսկական իշխանությունների որոշ գործողություններին՝ Դենշապուհի աշխարհագիրը, գործակալությունների ղեկավարումը պարսիկներին հանձնելը: Պարսկական պաշտոնեության հետագա թափանցումը կառավարման համակարգ կարող էր փոփոխել հողատիրության սկզբունքները, հետեւաբար, խարխլվում էր երկրի տնտեսական հիմքը: Գրականության մեջ շատ է շոշափվում, իսկ երբեմն էլ շահարկվում է դավանափոխության խնդիրը. արդ-

յո՞ք դա կհանգեցներ ազգաձուլմանը: Իհարկե, էթնոսների միախառնման գործընթացները բավականաչափ բարդ են, եւ փոքրիկ հաղորդումը ամենեին էլ բավարար չէ բոլոր գործոնների համալիր վերլուծության համար, սակայն Հայոց պատմության հետագա դարերի նմանատիպ գործընթացների ուսումնասիրությունը միանշանակ ցույց է տալիս, որ դավանափոխությունը կհանգեցներ արիստոկրատիայի ձուլմանը, ինչն անխուսափելիորեն կհանգեցներ հայ էթնոսի զգալի մասի ուծացմանը կամ արտագաղթին: Հետեւաբար, դավանափոխությունը ոչ միայն եւ ոչ այնքան կրոնագաղափարական, որքան քաղաքական ու տնտեսական քաղաքականություն էր, որը հայերի համար կարող էր ունենալ չափազանց ծանր հետեւանքներ:

Հաջորդ կարեւոր հիմնահարցը՝ արդյո՞ք գոյություն ունեցող ներուժը բավարար էր ապստամբության համար: Բնական է, ցանկացած ապստամբություն ստիպողական է եւ լիարժեք կազմակերպված չի կարող լինել, սակայն բանակի կազմավորման եղանակները, դրա ազգային բնույթը, սպարապետության կենտրոնացումը Մամիկոնյանների տոհմի ձեռքում՝ հայոց բանակը վերածում էր արդյունավետ գործող կառույցի: Մյուս կողմից՝ որքան էլ օտարերկրյա տիրակալները փորձեին Հայաստանը տեղափոխել այլ իրավական դաշտ, Ս. Գրիգորից ի վեր մշակված կանոնների համակարգն իրավական ամուր հիմք էր ստեղծում երկրի բնական կենսագործունեության համար: Այդ իմաստով եւ Արտաշատի, եւ Դվինի ժողովները, անխոս, օրինական էին ու իրավազոր: Ձեւավորված կառավարությունը բացառիկ երեւույթ էր ոչ միայն հայոց, այլեւ ողջ միջնադարյան պատմության մեջ, քանի որ այս ներկայացուցչական ժողովը ոչ թե գահակալին կից խորհրդակցական մարմին էր, այլ ինքնուրույն քաղաքական մարմին: Նույն կերպ տրամաբանական են ժողովների քաղաքական եւ ռազմական որոշումները. Հազկերտին ուղղված նամակը, ինչպես նաեւ Արարատյան դաշտի ամրացման որոշումը: Այս ամենն ապացուցում է, որ Հայոց պատերազմը ոչ թե մի խումբ իշխանների խռովությունն էր, այլ ծրագրված մի գործողություն, որը պետք է ընդգրկեր ողջ երկիրը՝ նպատակ ունենալով երկրի ազատագրումը:

Վերջապես՝ ճակատամարտը. ի՞նչ էր Ավարայրը... հաղթանա՞կ, պարտությո՞ւն, թե՞ պատերազմական մի միջադեպ: Հաղթանակ էր այն, գաղափարական ու քաղաքական կարեւոր հաղթանակ: Գաղափարական, քանզի կանխվեց դավանափոխության հայակործան քաղաքականությունը, Տիրոջ խոսքի ուժն ազգը միավորեց արտաքին վտանգի դեմ, քաղաքական, քանզի պետականակորույս ժողովուրդը կարողացավ միավորվել, ստեղծել երկրի

կառավարման կենտրոնակ մի համակարգ: Այս իմաստով չափազանցություն չի լինի ենթադրել, որ հենց Ավարայրը կերտեց ապագա Նվարսակը:

Արդյո՞ք այսքանով սահմանափակվում է Հայոց պատերազմի նշանակությունը: Եթե այդպես լիներ, ապա Ավարայրը սոսկ կլրացներ մեր ժողովրդի հերոսական պատմության էջերից մեկը: Ո՛չ, Ավարայրը՝ Հայոց պատերազմը զուտ պատմություն չէ: Արտաշատի ու Դվինի ժողովները, հայոց կառավարության ձեւավորումը ցույց տվեցին հայ ժողովրդի ինքնակազմակերպման ունակությունը, ապացուցեցին, որ թագավորության կործանումը, երկրի բռնակցումը չեն կարող կոտրել ինքնիշխանության ձգտումը, լռեցնել պետականաստեղծման բնազդը: Այդ իմաստով՝ Հայոց պատերազմը, ժողովրդի՝ Արտաշատում ու Դվինում արտահայտած միահամուռ կարծիքը, արեւելյան բռնապետական միապետությունում իրական ժողովրդավարության այդ բացառիկ դրսեւորումը նախապարապետեցին մեր անկախության հանրաքվեն, կանխորոշեցին 15 դար անց Հայոց պետականության վերականգնումը:

Եւ ինչպե՞ն պետություն չունեցող ժողովուրդը կարողացավ կազմել մի հզոր բանակ, որը զգետնեց թագավորություններ կործանած զինվորներին: Հավատի եւ ազատության ուժն էր, այն նույն ուժը, որը կերտեց Սարդարապատը, այն նույն ուժը, որով մեր նորանկախ հայրենիքը ազատագրեց Արցախը:

Վարդանանց զորավարների իմացյալ մահը՝ անմահությունը, իրական, շոշափելի հաղթանակ էր ազգի հոգեւոր ու ֆիզիկական մահվան նկատմամբ, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոս յուր մահվամբ եւ հրաշափառ հարությամբ հաղթեց մահվանը: Ինչպես Տիրոջ՝ Խաչից հեղված կենարար արյունը, այնպես եւ Վարդանանց զորավարների ու զինվորների թափած արյունը ոչ թե մահ է խորհրդանշում, այլ՝ հավերժ կյանք հայոց ազգի եւ Հայոց պետության համար:

Վեհափա՛ռ Հայրապետ, այսօր տոնում ենք նաեւ Ձերդ Սրբության անվանակոչության օրը՝ աղոթք բարձրացնելով առ Աստված, որ երկար օրեր պարգեւի Ձեզ: Եւ թող վասն հավատի զոհված Վարդանանց սուրբ զորավարներն ուժ տան Հայոց Հայրապետի Սրբալույս Աջին՝ հովվելու եւ առաջնորդելու Հայոց բանավոր հոտը: